ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՇԱՀԱՄԻՐ ՇԱՀԱՄԻՐՅԱՆԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ

Լիլիթ Սարվազյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Արցախի 44-օրյա պատերազմի և դրա հետևանքների համատեքստում հրատապ է դարձել պատերազմի և խաղաղության գլոբալ հիմնահարցի վերաիմաստավորումը՝ ազգային-պատմական, փիլիսոփայական, իրավական, ռազմագիտական, քաղաքական, դիվանագիտական և այլ դիտանկյուններից: Ի հակադրություն թուրք-ադրբեջանական զավթողական, ցեղասպան քաղաքականության ու վանդալիզմի՝ հայ ազգային-հասարակական շրջանակներում կարևորվում են ազգային ինքնության պահպանման, ինքնորոշման, Հայաստանի ինքնիշխան տարածքի անխախտելիության, Արցախի բռնազավթված շրջանների վերազատագրման սկզբունքները:

Հայրենիքի ռազմաքաղաքական պաշտպանության, պետության և ազգի անվտանգության, ազատության ու անկախության գաղափարներն արտացոլվել են դեռևս հայ սովորութային իրավունքում, հնագույն արձանագրություններում, թագավորական հրամանագրերում, զորանամակներում ու նախարարական իրավանորմերում:

Սպարապետությունը համարվել է հայոց պետության կառավարման համակարգի կենտրոնական գերատեսչություններից մեկը, որն իրականացրել է երկրի զինված ուժերը կազմավորելու, ինքնապաշտպանությունը կազմակերպելու և պատերազմական գործողությունները ղեկավարելու գործառույթներ:

Միջնադարի հայ օրենսգետների գլխավոր նպատակն էր՝ ազգային գաղափարախոսությամբ սատարել հայ ժողովրդի ազատագրական պայքարին և իրավական հիմք նախապատրաստել պետականության լինելիության համար: Ելնելով այս նպատակից՝ նրանք շեշտում էին

զինվորական օրենքների անհրաժեշտությունը: Զինվորական օրենսդրական մշակույթն առկա է Մխիթար Գոշի, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու, Սմբատ Սպարապետի սահմանած օրենք-ներում, ինչպես նաև նրանց թարգմանած օտար օրենսգրքերում, որոնք ստեղծագործաբար վերախմբագրելով՝ հեղինակները հարմարեցրել են հայոց երկառանձնահատկություններին ու ռազմաքաղաքական պահանջներին[1]:

Հայ իրավաքաղաքական մտքի պատմության մեջ առանձնակի տեղ ունի XVIII դարի ազգային-ազատագրական պայքարի և սահմանադրական պետականության գաղափարախոս ***Շահամիր Շահամիրյանը*** (1723-1797): Նրա գլուխգործոցը՝ ***«Որոգայթ փառացը»***[2] (1773թ.), արտացոլում է ազգային քաղաքական մշակույթի և հայոց իրավագիտակցության էական բնութագծերը: Ինչպես միջնադարի հայ օրենսգետների, այնպես էլ Շահամիրյանի քաղաքական փիլիսո-փայության և օրենսդրական գործունեության հիմքում ***մարդու հիմնախնդիրն է:*** Կառավարման լավագույն համակարգը, դրական իրավունքի, այդ թվում՝ զինվորական օրենքների ակունքները նա փաստարկում է՝ բացահայտելով մարդու արարման խորհուրդը, բնությունը, անձնիշխանությունը, նպատակն ու կոչումը[3]:

«Որոգայթ փառացի» ներածության մեջ առկա է ***ազատության ու անկախության*** գաղափարների ու դրանք իրականացնողների ջատագովություն, որը դարձավ իմաստասիրական և գիտամեթոդա-

---

[1] Տե՛ս **Մխիթար Գոշ,** Գիրք Դատաստանի / Աշխատասիր.՝ Խ. Թորոսյանի, Եր., 1975, հոդ. Բ, ԺԱ, ԺԴ, ՄԼ: Ընդհանրական Թուղթք **Սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ,** Յերուսաղէմ, 1871, էջ 75, 77-79: Զինուորական Օրէնք **Ներսիսի Լամբրոնացւոյ** // «Բանասէր», Պարիս, 1902, Թիւ 11, էջ 321-328: **Սմբատ Սպարապետի** «Դատաստանագիրքը» / Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան, Գիրք 1, Եր., 2001, հոդ. 1, 124, 143: **Սաֆարյան Գ.,** Իրավունքի պատմության և տեսության հիմնահարցեր, Եր., 2010, էջ 145-356:

[2] Տե՛ս **Շահամիր Շահամիրեան,** Գիրք անուանեալ Որոգայթ փառաց վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան, Թիֆլիս, Տպագր. Ն. Աղանեանի, 1913:

[3] Մանրամասն տե՛ս՝ **Միրումյան Կ.,** Քաղաքական ուսմունքների պատմություն, Եր., 2006, էջ 448-453: **Սարվազյան Լ.,** Շահամիր Շահամիրյանի քաղաքական-փիլիսոփայական հայեցակարգը՝ որպես օրենսդրության հիմք // «Պատմություն և հասարակագիտություն» (Գիտական հոդվածների ժողովածու), Եր., ՀՊՄՀ հրատ., 2016, էջ 335-356:

բանական հիմք Հայաստանի Սահմանադրության նախագծի համար: Շահամիրյանը գնահատում է վրացիներին, ովքեր պահպանեցին «...շուք ազատութեան 'ի մէջ ազգին իւրեանց»՝ չթուլացնելով բանական հոգու զորությունը: Մտածողն արժեվորում է Ամերիկյան Անկախության պատերազմը՝ հանձինս Ջորջ Վաշինգտոնի, ով պայքարում էր հանուն ազատության՝ ընդդիմանալով բրիտանացիներին: Ամերիկացու ազատասիրությունը «…բնական է 'ի բնութեանս մարդոյ»: Ճիշտ այդպես էլ հայերը պետք է ջանան ազատվել բռնատիրությունից ու ազգային օրենքներով վերականգնել պետականությունը: Շահամիրյանն ազատության ջատագովությունն ավարտում է իմաստուն խորհրդով. «***Լինիցուք մեք տէր միմիայն յաշխարհին մերոյ*** և թոյլ մի տացուք, զի քայլ մի 'ի յերկրէ այլոց աւելանալոյ վասն մեր, և մէնջ պակասիլ վասն այլոց, ուրեմն ջանալ… ստանալ այն, որ ***սեպհական ժառանգութենէ Հայոց*** ոչ է անիրաւութիւն եթե ո՛չ ***արդարութիւն*** (ընդգծումը.- Լ.Ս.)»[1]**:**

Կարևորելով ***ռազմարվեստի*** նշանակությունը՝ Շահամիրյանը հենց Ներածության մեջ հայ հայրերին հորդորում է որդիներին սովորեցնել «…զենքի հետ վարվելու [կերպը], զինվորական արհեստը և հնազադվել օրենքներին»: Իսկ հայ տիկնանց խորհուրդ է տալիս այնպես դաստիարակել դուստրերին, որ «…նրանք ամուսնանան քաջ տղամարդկանց և հաղթական զինվորականների հետ», ինչպես նաև դատապարտեն ամուսիններին, «…եթե նրանք ծառայության մտնեն այլ ազգերի մոտ»[2]: Մտածողի համոզմամբ՝ այս պատգամների կատարումը բավարար կլինի, որ Հայաստանում հաստատվի ազգային բարօրություն ու երջանիկ կյանք:

Հայաստանի անվտանգության Շահամիրյանի հայեցակարգն արտացոլված է նրա սահմանած ***միջազգային և զինվորական իրավանորմերում,*** որոնք բխում են Հայաստանի պետական

---

[1] **Շահամիր Շահամիրեան,** նշվ. աշխ., էջ 139:

[2] **Շահամիր Շահամիրյան**, Որոգայթ փառաց / Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան, հ. 2, Եր., 2002, Հավելված 1, էջ 45:

ինքնիշխանության, սահմանների անվտանգության պահպանման, երկրի ներքին կարգուկանոնի հաստատման նպատակներից:

«Որոգայթ փառացի» երկրորդ մասը Հայաստանի Սահմանադրության նախագիծն է, որի 1-ին հոդվածում որոշարկված են ***Հայաստանի պետական սահմանները.*** հանրապետությունը պետք է ստեղծվեր Հին Հայաստանի սահմանների շրջանակում՝ ընդգրկելով Արևմտահայաստանը, Արևելահայաստանը և Աղվանքը: Հայկական ողջ տարածքը՝ «…կենդանական ու բուսական պաշարներով և արդյունքներով եղել է և պիտի մնա ***Հայաստան*** անվամբ, և նրա բնակիչները՝ որպես մարդկային հանրություն կոչվում են ***հայեր***, և ողջ կենդանական աշխարհը՝ Հայաստանի երկրի երեսին, թե ջրերում, հայ ժողովրդի ժառանգությունն է. այս աշխարհից չպետք է ավելանա կամ պակասի ոչ մի թիզ հող, այստեղ միշտ հաստատ պետք է պահպանվի Հայոց Տունը՝ համաձայն Հայաստանի սահմանադրության»[1]: Այսինքն՝ Հայաստանի պատմական ողջ տարածքը, բնիկ ազգաբնակչությունը, երկրի ընդերքը, ջրերը և այն ամենը, ինչ գտնվում է երկրում, հռչակվում է ***հայոց ազգային-պետական անօտարելի սեփականություն՝*** ազգային իշխանության վերակսկողության ներքո: Վերականգնվում է Հայաստանի վարչատարածքային նախկին բաժանումը՝ ըստ նահանգների և գավառների, «…որպեսզի ոչ ոք չհամարձակվի անգամ մի թիզ հող ավելացնել կամ պակասեցնել որևէ տեղից»[2]: Այդպիսով՝ սահմանադրորեն ամրագրվում են ***հայ ազգի իրավասուբյեկտությունը Հայրենիքում և Հայոց պետության ինքնիշխան տարածքի ու սահմանների անձեռնմխելիությունը:***

Ըստ Սահմանադրության նախագծի՝ Հայաստանի օրենսդիր մարմինը՝ Հայոց Տունը, ընտրում է և՛ գործադիր իշխանությունը, և՛ երկրի տարբեր գերատեսչություններն ու դրանց ղեկավարներին: Յուրաքանչյուր բարձր պաշտոնյա՝ պատգամավոր, նախարար, դատավոր, զորապետ և այլք, իր խորհրդականներով չի կարող

---

[1] Նույն տեղում, հոդ. 1, էջ 46-47:

[2] Նույն տեղում, հոդ. 107, էջ 100:

պաշտոն ստանալ, «...եթե բուն հայոց սեփական ազգից և ծնունդով Հայաստանցի չէ և Քրիստոսով մկրտված չէ Հայաստանյաց Սուրբ Եկեղեցու դավանությամբ»[1]: Ըստ օրենքի՝ օտարազգի, այլակրոն և այլադավան անձինք չեն կարող ստանձնել բարձր պաշտոններ: Հայաստանի գործադիր իշխանության գլուխը՝ Նախարարը, «... պարտավոր է՝ Հայոց Տանն ահազանգելու թշնամիների մոտենալու, հայոց ազգի ու աշխարհի դեմ վնասարարության և անարգանքի վտանգի մասին, պարտավոր է կանխել թշնամու կողմից Հայոց աշխարհի ավերումը, ժողովրդին նեղություն պատճառելը, և թշնամիների պատճառած վնասի համար ինքն է պատասխանատու»[2]:

Հայաստանում պետք է գործեին հետևյալ ***զինվորական գերատեսչությունները***.

- ***Սպարապետություն.*** երեք տարով ընտրվում է ինը անձ՝ զորապետության պաշտոնի համար: Նրանցից յուրաքանչյուր երեքը կազմում են առաջին, երկրորդ և երրորդ սպարապետությունները: Ըստ հանդերձանքի գույնի՝ երեք սպարապետության զորապետները կոչվում են «...կարմիր սպարապետ, կապույտ սպարապետ և դեղին սպարապետ»: Նրանց դրոշները նույն գույներով են, և զորքերը կրում են կարմիր, կապույտ և դեղին համազգեստ[3]:
- ***Ասպետություն.*** ինը անձ ընտրվում է հեծելազորի հրամանատարության համար («վասն ասպետութեան»)»[4]:
- ***Հրաձգային բարձր հրամանատարություն.*** ինը անձ ընտրվում է «...հրաձգային զորքերի բարձր հրամկազմի («հրաց զօրագլխութեան») համար»[5]:
- ***Բանակի այլ պաշտոնապետեր.*** 27 մարդ (երեքական անձով) երեք տարով ընտրվում է հետևյալ պաշտոններում. **ա)** հետախու-

---

[1] Նույն տեղում, հոդ. 33, էջ 59:

[2] **Հարությունյան Մ., Ստեփանյան Հ., Մնջիկյան Խ.,** Արևմտաեվրոպական և ետխորհրդային պառլամենտարիզմը համեմատական հեռանկարում, Եր., 2020, էջ 455:

[3] Տե՛ս՝ **Շահամիր Շահամիրյան,** նշվ. աշխ., հոդ. 24, էջ 56, հոդ. 285-287, էջ 134:

[4] Տե՛ս նույն տեղում, հոդ. 25, էջ 57:

[5] Նույն տեղում, հոդ. 26, էջ 57:

զության պետ («լրտես պետութեան»). երեք անձ պետք է ապահովի երկրի անվտանգությունը, տեղեկություններ հայթայթի՝ Հայոց պետության նկատմամբ արտաքին վտանգի, այլ պետությունների հանցավոր մտադրությունների վերաբերյալ և դրանք հաղորդի Գաղտնի խորհրդին[1], **բ)** զինամթերքի մատակարարման պետ, **գ)** վառոդի արտադրության պետ, **դ)** կառաշինության պետ, **ե)** վրանաշինության պետ, **զ)** սննդամատակարարման պետ, **է)** դրամական գործառնությունների («գանձապետութեան») պետ, **ը)** հողաշինության և տեղազննության գործերի («երկրաչափութեան») պետ, **թ)** հիվանդանոցների և աղքատանոցների պետ («պետ տկարաց և աղքատաց»)[2]:

- ***Հազարապետություն.*** Հայոց Տան բոլոր պատգամավորների միջից ընտրվում է 90 անձ՝ «…հազարապետության պաշտոնի համար… իրենց կյանքի լրիվ ժամանակով»[3], այսինքն՝ ցմահ: Հայոց բանակի 1000 զինվորից բաղկացած յուրաքանչյուր զորամաս գլխավորում է մեկ հազարապետ: Նա ունի իրավունք՝ անօրինականության դեպքում պատժելու ենթականերին վարչական տույժով կամ կալանմամբ, բայց եթե դատարանն ապացուցի կալանվածի անմեղությունը, հազարապետը պարտավոր է «…պատասխանատվություն կրել կալանավորության հետևանքով զինվորին հասցված վնասի համար»[4]:

Շահամիրյանը սահմանել է ***զինվորական օրենքներ՝*** Հայաստանի զինված ուժերի, երկրի անվտանգության պաշտպանության, զինվորականների իրավունքների ու պարտականությունների, զենքի պատրաստման, զենքի ներմուծման ու արտահանման, գերեվարության և այլ հարցերի վերաբերյալ:

Ըստ Սահմանադրության նախագծի՝ Հայաստանի պետությունը պետք է ունենա «…***ինքնուն հազարանոց վճարովի բանակ՝ յոթնամյա***

---

[1] Տե՛ս՝ նույն տեղում, հոդ. 27, էջ 57, հոդ. 65, էջ 75:
[2] Տե՛ս՝ նույն տեղում, հոդ. 27, էջ 57:
[3] Նույն տեղում, հոդ. 30, էջ 58:
[4] Նույն տեղում, հոդ. 74, էջ 82:

զինվորական ծառայության ժամկետով»[1]: Զորքը կոչված է՝ հավատարմորեն ծառայելու հայ ժողովրդին: Բանակը կազմված է 21 000 հեծյալ և 69 000 հետևակ զորքից: Զորքը բաղկացած է երեք զորամիավորումից, որոնցից յուրաքանչյուրն ունի 7000 հեծյալ և 23 000 հետևակ: Սահմանված է զորքի համալրման հատուկ կարգ, որի համաձայն՝ զորքը համալրվում է ***կամավոր հիմունքներով*** կամ ***վիճակահանությամբ.*** «Եթե զինվորական ծառայության մեջ կամավոր կերպով մտնեն իննսուն հազար հայոց երիտասարդներ ու պատանիներ՝ բավարար է», իսկ եթե ոչ, ապա «…Հայոց պետությունը բոլոր գավառներից ու բնակավայրերից պատանիներ է հավաքագրում վիճակահանությամբ՝ հարյուրից հինգին»[2]: Յոթ տարի ծառայելուց հետո զինվորն ազատ է՝ վերադառնալու տուն:

Բանակը գլխավորում է Հայոց Տանն ընտրված ինը զորապետ: Ինչպես նշվել է, նրանցից յուրաքանչյուր երեքը կազմում է առաջին, երկրորդ և երրորդ սպարապետությունները: Հեծելազորը և հետևակազորն իրենց զորապետներով «…ենթարկվում են Նախարարի գրավոր և բանավոր հրամաններին՝ հնազանդ Հայոց Ավագների խորհրդին»[3]: Հայաստանի վարչատարածքներում տեղակայված զինված ուժերը ենթարկվում են զորահրամանատարին, ով «…ղեկավարվում է նահանգի կառավարչի հրահանգներով»[4]: Այդպիսով՝ ***զինված ուժերը վերահսկում է պետական (կենտրոնական ու նահանգային) իշխանությունը:*** Բայց «…պատերազմի ժամանակ զինվորական յուրաքանչյուր խմբավորում իր հրամանատարին ընդունում է որպես նախարար»[5], այսինքն՝ գործադիր իշխանության բարձրագույն պաշտոնյա: Հրամանատարներն ունեն տեղակալներ, և եթե վիրավորվում է առաջին տեղակալը, զինվորները երկրորդ տեղակալին ընդունում են նույն կարգով:

---

[1] Նույն տեղում, հոդ. 277, էջ 131-132:
[2] Նույն տեղում, հոդ. 411, էջ 168: Տե՛ս նաև՝ հոդ. 353, էջ 150:
[3] Նույն տեղում, հոդ. 279, էջ 133:
[4] Նույն տեղում, հոդ. 164, էջ 111:
[5] Նույն տեղում, հոդ. 280, էջ 133:

Շահամիրյանը սահմանել է ***զորահրամանատարների ու զինվորների իրավունքներն ու պարտականությունները:*** Նա կարևորում է հրամանատարների ռազմադաստիարակչական պարտավորությունը. յուրաքանչյուր շաբաթ օր նրանք զինվորների համար պետք է մեկնաբանեն զինվորական օրենքները[1]: Հազարապետները պարտավոր են աչալուրջ լինել իրենց պաշտպանությանը հանձնված տարածքներում, հաշվառել զորամասի զինվորներին, տեղեկատվական զեկույց ներկայացնել զորապետին, ստուգել զինվորների հանդերձանքն ու լրացնել պակաս հագուստը[2]: Հրամանատարներն իրենց ենթակայության ներքո գտնվող զորքի վերաբերյալ պարտավոր են տարեկան չորս հաշվետվություն ներկայացնել իրենց պետին՝ հետևյալ կարգով. տասնապետը հաշվետու է հարյուրապետին, նա՝ հազարապետին, հազարապետը՝ զորագլխին, նա՝ սպարապետին, իսկ վերջինը՝ նախարարին: Ի վերջո՝ «Նախարարը հաշվետվություն է ներկայացնում Հայոց Տան Ավագների խորհրդի պալատի ատյան»[3], որտեղ ամփոփվում են տարվա ռազմական արդյունքները:

Ըստ օրենքի՝ ***զինվորական դասին պատկանող անձինք պարտավոր են պաշտպանել սեփական անձն ու արժանապատվությունը:*** Եթե որևէ մեկը՝ տասնապետից մինչև նախարար, անարգանքի է ենթարկվում ինչ-որ անձից ու անպատասխան է թողնում, իսկույն պաշտոնանկ է արվում, «…քանզի մի անզուսպ մարդուց չի կարողացել պաշտպանել իր աստիճանի ազատ դասի պատիվը»[4]:

Զինվորներն իրավունք ունեն հարձակվել միայն հրամանատարի հրամանով, սակայն «…բացառվում է Ավագների խորհրդի՝ Հայոց գերագույն իշխանության վրա հարձակվելը և Ավագների խորհրդի հրամաններին չենթարկվելը»[5]: Յուրաքանչյուր զինվոր պարտավոր է

---

[1] Տե՛ս՝ նույն տեղում, հոդ. 301, էջ 136:
[2] Տե՛ս՝ նույն տեղում, հոդ. 302, էջ136:
[3] Նույն տեղում, հոդ. 307, էջ 137:
[4] Նույն տեղում, հոդ. 494, էջ 181:
[5] Նույն տեղում, հոդ. 281, էջ 133:

հետևել մաքրակեցության կանոններին, մաքուր պահել իր հագուստը, յուղով մաքրել զենքը, ուսապարկում ունենալ որոշակի զինամթերք[1]:

Օրենսդրորեն կարգավորվում է նաև ***զենքի արտադրությունը:*** Ըստ Շահամիրյանի՝ Հայաստանում նպատակահարմար է, որ հրացանները պատրաստվեն հավասարաչափ՝ փողի երկարությամբ ու տրամաչափի մեծությամբ, որ հարկ եղած դեպքում «…մի հրացանի կայծքարը, գնդակը և մխոցը փոխարինվի մյուսով»[2]:

Զինվորական օրենքները ներառում են որոշակի ***պատիժներ՝ ուղղված օրինազանց զինվորականների դեմ:*** Ըստ օրենքի՝ զինվորական յուրաքանչյուր պաշտոնյա Ավագների խորհրդի հրամանները զանցառելիս «…կորցնում է իշխանական ազատությունը, կալանավորվում զանցառուի տեղակալի կողմից և շղթայակապ բանտարկվում»[3]: Ընդ որում՝ անհնազանդության համար սահմանված են խիստ պատիժներ՝ ընդհուպ մահապատիժ: Հայոց նախարարն իրավունք ունի՝ մեղադրանք ներկայացնելու զինվորական օրինազանց պաշտոնյաների դեմ և կալանելու նրանց: Բայցև նախարարի իրավունքը սահմանափակ է, քանզի զինվորականներին պաշտոնազրկելու համար նա «…պարտավոր է ունենալ արարքի հանցավորության աստիճանից ելնող դատական վճիռ»[4]: Կալանված կամ կարգապահական տույժի ենթարկված զինվորականները պետք է հնազանդվեն իրենց վերադասին: Նրանք կարող են ազատ արձակվել միայն դատարանի վճռով:

Սահմանադրության մի շարք հոդվածներ վերաբերում են ***պատերազմական իրադրությանն առնչվող խնդիրներին***, օրինակ՝ մարտադաշտում զորքի կայանմանը (տես՝ հոդ. 328, 336), զորաշարժի կարգին (տես՝ հոդ. 329, 332, 333), տեղազննությանը (տես՝ հոդ. 331, 335), զորամաս բերվող և տարվող գրությունների վերահսկմանը (տես՝ հոդ. 338), արտակարգ դրության հայտարարմանը (տես՝ հոդ. 344), մարտական գործողություններին (տես՝ հոդ. 334) և այլն:

---

[1] Տե՛ս՝ նույն տեղում, հոդ. 304-306, էջ 137:
[2] Նույն տեղում, հոդ. 117, էջ 102:
[3] Նույն տեղում, հոդ. 486, էջ 179:
[4] Նույն տեղում, հոդ. 309, էջ 138: Տե՛ս նաև՝ հոդ. 308:

Շահամիրյանը սահմանել է նաև ***արգելող նորմեր:*** Օրինակ՝ «Ոչ ոք՝ ինչ կոչում էլ ունենա, իրավունք չունի բանակից դուրս հանել ոչ զենք, ոչ սննդամթերք, ոչ դրամական միջոցներ… առանց սպարապետի գրավոր թույլտվության»[1], հակառակ պարագայում՝ կկալանավորվի:

Ուշագրավ են «Որոգայթ փառացում» սահմանված ***միջազգային իրավանորմերը,*** որոնք վերաբերում են պատերազմական իրավիճակում գործող հաղորդակցության, գերեվարության, ավարի բաժանման, պաշարված բնակավայրերից դուրս գալու կարգին, գրավյալ տարածքների բնակչության անձնական և գույքային իրավունքների պաշտպանությանը, ռազմատուգանքին ու խաղաղության դաշնագրերին:

Ըստ օրենքի՝ «Պատերազմի ժամանակ բանագնացությունն ազատ է միայն զորապետների միջև»: Բանագնացներն ազատ ելումուտ ունեն հակառակորդի բանակատեղի՝ «…սպիտակ դրոշը ձեռքին, որը բանագնացի նշանն է»[2]: Նրանք հանձնում են պաշտոնական գրությունները և ապահով վերադառնում իրենց բանակատեղ: Բանագնացներն իրականացնում են նաև հասարակական թղթակցություն: Հակառակորդի կամ գրավյալ երկրներում գտնվող հարազատներին հասցնելով զինվորականի կամ այլ անձանց նամակները՝ նրանք պատասխան գրությունները բերում են հասցեատերերին, ***եթե դրանք զերծ են ռազմական կարևոր կամ գաղտնի տեղեկատվությունից***[3]: Սակայն «Պատերազմի ժամանակ բռնված թշնամական ամեն մի լրտես իսկույն մահապատժի է ենթարկվում»[4]:

Այդպիսով, կարևորելով զինվորականների ու ժողովրդի քաղաքացիական իրավունքների իրացումը՝ Շահամիրյանը, ինչպես Մխիթար Գոշն ու Սմբատ Սպարապետը[5], գերագույն պատիժ է

---

[1] Նույն տեղում, հոդ. 337, էջ 145:
[2] Նույն տեղում, հոդ. 321, էջ 141:
[3] Տե՛ս՝ նույն տեղում, հոդ. 322, էջ 141:
[4] Նույն տեղում, հոդ. 467, էջ 176:
[5] Տե՛ս **Մխիթար Գոշի** «Դատաստանագիրք Հայոցը» / Ավագյան Ռ., Հայ իրավական մտքի գանձարան, Գիրք 1, Եր., 2001, հոդ. 2, էջ 391-398: **Սմբատ Սպարապետի** «Դատաստանագիրքը» /Ավագյան Ռ., նշվ. աշխ., հոդ. 1, էջ 564-565:

սահմանում պետության և ազգի անվտանգությանը սպառնացող զինվորական հանցագործությունների համար:

Օրենսգետը ***մարդասիրական*** վերաբերմունք է պահանջում պաշարված բնակավայրերի զինվորների ու խաղաղ բնակիչության հանդեպ: Ըստ օրենքի՝ եթե որևէ նահանգի, քաղաքի կամ ամրոցների հանձնման վերաբերյալ կնքված է ***դաշնագիր,*** պետք է անխախտ պահել այն (տես՝ հոդ. 320): Պաշարված քաղաքի զինվորներին ու բնակիչներին տրվում է 15 օրյա արտոնյալ ժամկետ՝ «…ընտանիքով և ունեցվածքով դուրս գալու թշնամու քաղաքից կամ ամրոցից»[1]: Նրանք իրավունք ունեն մնալ Հայոց երկրում՝ որպես ***ազատ վտարանդի***, եթե վճարեն իրենց ունեցվածքի տասանորդը: Իսկ պատերազմի ավարտից և խաղաղություն հաստատվելուց հետո կրկին ազատ են՝ վերադառնալու իրենց հայրենիք:

Միաժամանակ՝ ***դաժանորեն պատժվում է դաշնագիրը խախտող թշնամին:*** Եթե որևէ կառավարիչ կամ բերդակալ դավաճանությամբ խախտում է հայոց զորքի պաշարած քաղաքը կամ բերդը խաղաղ հանձնելու դաշնագիրը, ինչի հետևանքով զոհվում է 24 հայ զինվոր, հայոց բանակը պարտավոր է հարձակվել և մտնել քաղաք կամ բերդ: Այս պարագայում՝ «…թշնամու ոչ մի զինվոր կամ հրամանատար կենդանի չպետք է մնա մեր սրի բերանից», իսկ օրինազանց կառավարիչը կամ բերդակալը «…անարգանքի ենթարկվելով՝ պետք է կախվի քաղաքի դարպասից կամ բերդի գլխից», և թշնամու ողջ ունեցվածքը դառնա հայ զինվորների օրինական ավարը: Ըստ օրենքի՝ մինչև մեղավորը մեղա չգա, «…թշնամու բնակչության նկատմամբ մեր զինվորների կատարած ամեն մի գործողություն դատապարտելի չէ»[2]:

«Որոգայթ փառացում» առկա է օրենք՝ օտարազգի քրեական հանցագործի պաշտպանության վերաբերյալ: Պատերազմի կամ խաղաղության ժամանակ օտար երկրից փախած քրեական հանցագործը կարող է ապաստանել Հայաստանում՝ պետության

---

[1] **Շահամիր Շահամիրյան,** Որոգայթ փառաց, հոդ. 325, էջ 141-142:
[2] Նույն տեղում, հոդ. 491, էջ 180:

երաշխավորությամբ ազատվելով մահապարտությունից. «Ոչ ոք իրավասու չէ հեռացնել նրան Հայոց պետության սահմաններից՝ բացառությամբ, եթե տուժող կողմը կյանքի ներում է շնորհում նրան, և նա կամովի ցանկանում է լքել մեր երկիրը, ապա նա ազատորեն կարող է հեռանալ՝ ուր ինքը կամենա»[1]:

Պատերազմի ժամանակ Հայաստանում ապրող ***օտարազգիների անձը և ունեցվածքը հայտարարվում են անձեռնմխելի:*** Իսկ եթե որևէ մեկը ցանկանում է վերադառնալ հայրենիք, ապա պատերազմի հռչակման օրից սկսած՝ 45 օրվա ընթացքում կարող է ստանալ իր անձի մասին ***ազատագիր*** և հայերի պաշտպանությամբ հասնել մինչև իր երկրի սահմանը: Այս դեպքում «…նրա ողջ ունեցվածքը մնում է իր ներկայացուցչի խնամքի տակ՝ մինչև խաղաղության հաստատումը, որից հետո կարող է իր ունեցվածքը հանել մեր երկրից»[2]:

Գրավյալ տարածքներում արգելվում է ավերել ժողովրդի տներն ու այգիները, բացի այն շինություններից, որոնց քանդելն անհրաժեշտ է ***ռազմավարական*** նպատակներով (տես՝ հոդ. 389): Իսկ դաշնագրով հանձնված թշնամու գավառների բնակիչները «…անձի և գույքի պաշտպանություն են գտնում մեր կողմից, որի համար պետք է նրանց պահպանել որպես մեր ժողովուրդ և թույլ տալ… ազատորեն տնօրինելու սեփական ունեցվածքը»: Միայն այն հարկերն ու մաքսը, որ նրանք տալիս էին իրենց տերերին, պետք է տան հայերին: Ընդ որում՝ բանակի նահանջելու ժամանակ «…ոչ ոք իրավունք չունի գերել նրանց, տեղահանել իրենց բնակավայրերից և ավարի ենթարկել նրանց ունեցվածքը. նրանք իրենց տեղերում են մնում հաստատ ու անշարժ՝ հնազանդվելով իրենց տերերին»[3]:

Ըստ օրենքի՝ հայերի պաշտպանությանն ապավինած օտարների գավառները, ավանները, այգիներն ու ընտանի կենդանիները հայտարարվում են ***հայերի ժառանգական սեփականությունը,*** իսկ «…նրանց տերերը հավասարեցվում են սովորական հարկ, մաքս, հաս

---

[1] Նույն տեղում, հոդ. 326, էջ 142:
[2] Նույն տեղում, հոդ. 325, էջ 142:
[3] Նույն տեղում, հոդ. 387, էջ 162:

բաժին վճարող մեր հնազանդ բնակչությանը»[1], և ապահովվում է նրանց անվտանգությունը: Սակայն, եթե պաշտպանություն ստացած հպատակները դավաճանում են, «…արժանանում են իրենց դավաճանությամբ պատճառած վնասին համապատասխան պատժի, ընդհուպ՝ մահապատիժ, գերություն և ողջ ունեցվածքի բռնագրավում»[2]: Դատավճիռը կայացնում է այն սպարապետը, ում գնդի զինվորները տեղեկացրել են դավաճանության մասին:

Սահմանադրության նախագծում սահմանված է նաև ***գերեվարության կարգը:*** Մի շարք իրավանորմերում արգելվում են գերիների սպանությունը, վաճառքը և կանանց գերավարությունը: Այն զինվորականը կամ զորահրամանատարը, ով «…սառնարյուն կերպով սպանում է իր անմեղ գերուն՝ մահապատժի է ենթարկվում»[3]: Բայց եթե գերին անհնազանդ է, նա է խստորեն պատժվում: Օրինակ՝ եթե հայոց զորքին գերի հանձնված թշնամու զինվորը կամ հրամանատարը մինչև խաղաղության դաշինք կնքելը զինված հարձակվի հայերի վրա կամ փախչի, մահապատժի է ենթարկվում (տես՝ հոդ. 488): Իսկ եթե զինվորականն անձնատուր է լինում հայ զինվորի կամ սպայի հանդիպելիս և զենքը վայր է դնում, «…չպետք է սպանվի» (հոդ. 318):

Պատերազմի ժամանակ հեթանոս ու քրիստոնյա գերիները վաճառքի ենթակա չեն: Նրանց պետք է պահել մինչև խաղաղության հաստատումը: Գերիների պահպանման ծախսերը պարտավոր է վճարել թշնամի պետությունը, իսկ եթե զլանում է վճարել, «…գերվածներին դատապարտում է Հայաստանում ծառայական վիճակի («ի պաշտօն ծառայութեան հայոց»)՝ ինչ գործում որ հարկավոր կլինեն հայերին»[4]: Օրենքը թույլատրում է ***հայ գերիներին փոխանակել օտարազգի գերիների հետ:*** Հակառակ դեպքում՝ խաղաղության դաշինք կնքելիս պետք է թշնամուն հարկադրել վճարել

[1] Նույն տեղում, հոդ. 390, էջ 163:
[2] Նույն տեղում, հոդ. 391, էջ 163:
[3] Նույն տեղում, հոդ. 489, էջ 180:
[4] Նույն տեղում, հոդ. 317, էջ 140:

մեր գերի ընկածների գինը: Դաշինքի համաձայն՝ գերիներն ազատ են մնալու կամ հեռանալու Հայաստանից:

Արգելվում է օտար կանանց գերեվարումը. «Թե՛ պատերազմի, թե՛ խաղաղության ժամանակ իգական սեռի յուրաքանչյուր անձ ազատ է գերությունից» և չի ենթարկվում բռնության: Եթե թշնամի երկրի կանայք կամովի «խառնակվում են» հայ զինվորների հետ՝ մեկ արծաթ դահեկան վարձով, վերջիններս չեն պատժվում: Բայց եթե զինվորականը «…բռնությամբ է խառնակվում թշնամու կնոջ կամ աղջկա հետ… դատվում է ըստ Հայոց օրենքների»[1]: Շահամիրյանը կարևորում է ***կանանց պաշտպանությունը,*** ինչը «…խորթ է բարբարոսներին՝ նկատի ունենալով նրանց բռնի սովորությունները»: Նա հույս ուներ, որ «…Հայոց ազգը մեր թշնամիներից սիրո և պատվի կարժանանա»[2], բայց, ցավոք, և՛ պատմությունը, և՛ ներկան դաժան իրողություններ են վկայում հայոց նկատմամբ թշնամիների բռնությունների վերաբերյալ:

Շահամիրյանը ***հայ խաղաղ բնակչության գերեվարության խնդիրը*** լուծում է հետևյալ կերպ. ովքեր տեղահանվել են իրենց բնակավայրերից, և ավարառվել է նրանց ունեցվածքը, հայոց զորքը պարտավոր է հետապնդել թշնամուն՝ ստիպելով վերադարձնել «…մեր գերիներին՝ ունեցվածքով հանդերձ, ավելացրած՝ նույնքան մարդ իր բնակիչներից և նույնքան ունեցվածք [իր երկրից]՝ որպես իր անօրեն վարմունքի տույժ»[3]: Փաստորեն՝ թշնամուց իրավամբ ***ռազմատուգանք է*** պահանջվում խաղաղ բնակչությանը տեղահանելու և նրա գույքը բռնազավթելու դեպքերում, ընդ որում՝ այն ժողովրդի համար, որը ոչ միայն զենք չի գործածել ու ընդդիմացել, այլև բարեխղճորեն վճարել է հարկերը:

Սահմանադրության նախագծում սահմանված է նաև ***թշնամու տարածքում ձեռք բերված ավարի բաժանման կարգը:*** Ըստ օրենքի՝

---

[1] Նույն տեղում, հոդ. 490, էջ 180:
[2] Նույն տեղում, հոդ. 319, էջ 140:
[3] Նույն տեղում, հոդ. 388, էջ 162:

թանկարժեք մետաղները (ոսկի արծաթ), քարերը, զարդերը, անասունները, խմիչքը և այլն, վաճառվում են աճուրդով, և գումարը բաժանվում է նախարարի, զորապետների ու զինվորների միջև[1]: Պատերազմում հիվանդացած կամ զոհված զինվորը (կամ նրա ընտանիքը) «…ձեռք բերված ավարից ստանում է ողջ և առողջ զինվորականին հավասար բաժին»[2]: Ըստ օրենքի՝ զոհվածներին հասնող ավարի բաժինը նախ տրվում է «…զոհվածի ժառանգներին, եթե ժառանգներ չունի՝ մերձավոր ազգականներին»[3]: Ակնհայտ է, որ զինվորական օրենքներում, ինչպեսև այլ իրավանորմերում Շահամիրյանը կարևորում է օրենքների համապատասխանությունը մարդու բնությանը:

Օրենսգետը մեկնաբանում է պետության ***հարկային, մաքսային քաղաքականությունը*** ՝ պետական հարկեր սահմանելով շահութաբեր ցանկացած գործունեության պարագայում. «Քանի որ Հայոց պետությունը բանակով պաշտպանում է Հայոց աշխարհը, ապահովում է Հայոց ազգի ազատությունը… հատուցում է թշնամու կողմից կողոպտված ունեցվածքը… զերծ պահում Հայոց աշխարհը և ողջ ժողովրդին այլազգիների գերության լծից և պահում իր բարեխնամ հովանու ներքո… ուստի՝ այս ամենի համար Հայաստանի ազգաբնակչությունը պարտավորվածություն է կրում… հատուցելու մեր պետությանը՝ հարկ, մաքս, հաս բաժին ու հնազանդություն ցուցաբերելու մեր Սահմանադրության հանդեպ»: Տարեկան ստացվող բոլոր եկամուտներից, բարիքներից ու պարգևներից բնակիչները պարտավոր են ***տասանորդ*** վճարել Հայոց պետությանը, և «…տրվող հարկը մեր օրինական և իրավական պարտքն է»[4]: Այդպիսով՝ ***հարկային քաղաքականությունը միտված էր ապագա Հայաստանի***

---

[1] Տե՛ս՝ նույն տեղում, հոդ. 311, էջ 138:
[2] Նույն տեղում, հոդ. 312, էջ 139:
[3] Նույն տեղում, հոդ. 314, էջ 139:
[4] Նույն տեղում, հոդ. 410, էջ 167-168; Տե՛ս նաև՝ հոդ. 345-347, էջ 147-148, հոդ. 403-407, էջ 166-167, հոդ. 412-416, էջ 168-169:

Հանրապետության արտաքին անվտանգության պահպանմանն ու հասարակության բարօրության հաստատմանը:

Սահմանադրության մեջ սահմանված է ***մաքս՝*** Հայաստան ներմուծվող կամ օտար երկրներ արտահանվող ապրանքների համար: Ընդ որում՝ ***Հայաստան ներմուծվող զենքի և զինամթերքի համար հարկ և մաքս չի գանձվում.*** «Ամենայն զէն և գործիք պատերազմի մտցէ առ աշխարհն հայոց ազատ լիցի հարկից և մաքսից»[1]: Այս հոդվածն արտացոլում է Հայոց բանակի վերազինման խնդրով շահագրգիռ Շահամիրյանի քաղաքական նպատակը՝ ***սահմանադրորեն հռչակելու զենքի ու զինամթերքի ներմուծման ազատությունը:*** Նա նաև սահմանել է օրենք՝ որոշ ապրանքների արտահանման արգելքի մասին. «Ամեն մարդ ազատ է իր արտադրած ապրանքներն առևտրական նպատակներով արտահանել օտար աշխարհ, բացի ***զենքից և գործիքներից***… ոսկյա և արծաթյա իրերից ու ***զինամթերքից,*** որոնք ***խստիվ արգելված են*** (ընդգծումը.- Լ.Ս.)»[2]: Մեկ այլ հոդվածում շեշտվում է հենց ***ռազմական իրավիճակում*** գործող արգելքը. «Պատերազմի ժամանակ արգելվում է Հայոց երկրից թշնամու տուն և երկիր, կամ բանակ՝ սնունդ, ոսկի, արծաթ, զենք ու զինամթերք տանելը»: Իսկ ով փորձի գաղտնի արտահանել, հանցանքը բացահայտվելուց հետո ապրանքը բռնագրավվում է, և հանցավորը «…բանտարկվում ու իր հանցանքի ծանրությանն արժանի պատիժ է կրում՝ ըստ դատավճռի»[3]:

Սահմանադրության նախագիծը բովանդակում է ***քրեական իրավանորմեր,*** որոնցում դատապարտվում են պետական իշխանության և Սահմանադրության դեմ ուղղված իրավախախտումները: Անկախ պաշտոնից՝ եթե վարչական կամ զինվորական որևէ պաշտոնյա ըմբոստանում է «Հայոց Տան և օրենքների դեմ, մահապատժի է ենթարկվում՝ համախոհներով հանդերձ»[4]: Ընդ որում՝ նրանց ժառանգներին (մինչև յոթերորդ սերունդ) արգելվում է պաշտոնավարել

---

[1] Տե՛ս՝ նույն տեղում, հոդ. 190, էջ 116:
[2] Նույն տեղում, հոդ. 152, էջ 109:
[3] Նույն տեղում, հոդ. 493, էջ 180-181:
[4] Նույն տեղում, հոդ. 484, էջ 179: Տե՛ս նաև՝ հոդ. 171-172, էջ 113-114:

կառավարության մեջ և բանակում: ***Դավաճաններն ու թշնամու լրտեսները մահապատժի են ենթարկվում:*** Պարգևատրվում են այն անձինք, ովքեր հայտնում են ազգի և պետության նկատմամբ դավադրության կամ չարանենգ այլ գործողության մասին: Իսկ եթե որևէ մեկը «…խաբեբայությամբ և նախանձից դրդված է զրպարտում արդար մարդուն՝ պատիժ է ստանում»[1]: ***Արգելվում է այն հրամանների կատարումը, որոնք ուղղված են Հայոց պետության դեմ:***

«Որոգայթ փառացի» գաղափարադրույթներին առնչվում է 1777-1779թթ. Շահամիր Շահամիրյանի կազմած ***Հայ-ռուսական դաշնագրի նախագիծը***[2]: Ըստ դրա՝ Հայաստանը հռչակվում է ինքնուրույն ժողովրդավարական հանրապետություն, և այն պետք է կառավարվի ազգային օրենքներով. «Նախարարութիւն Հայաստանեայց լիցի հրովարտակաւ՝ ի տանէ Հայոց ըստ օրինացն Հայաստանեայց»[3]: Հայոց պետությունը պետք է ղեկավարի բարձրագույն օրենսդիր մարմինը՝ ***Հայոց տունը,*** որը ռուսական կայսրությունը պարտավոր է ճանաչել «իբրեւ զթագաւորն Հայաստանեայց»[4], այսինքն՝ որպես Հայաստանի գերագույն իշխանություն:

Թեև Հայաստանը, որպես հայ-ռուսական դաշնագրի կողմ, ինքնուրույն պետություն է իր վարչատարածքային կառույցով, պետական մարմիններով, այնուամենայնիվ, ***դաշնագրում սահմանափակված է հայկական պետության ինքնիշխանությունը:*** Հայոց երկրի և ազգի անվտանգությունը պահպանելու նպատակով 20 տարի ժամկետով Հայաստանի տարածքում պետք է մնային ***ռուսական զորքերը*** ՝ թվով վեց հազար մարդ. «2000 ձիաւոր, 2000 հետեւակք և 2000 թնդանօթաձիգ»[5]: Այդ զորքերը պահելու համար Հայոց տունը

---

[1] Նույն տեղում, հոդ. 120, էջ 103:

[2] Տե՛ս՝ Դիւան Հայոց պատմութեան, Գիրք Դ. (Յառաջաբանով, Յաւելուածներով եւ Ծանօթութիւններով հրատ.՝ **Գ. Աւագ քահանայ Աղանեանց**), Թիֆլիս, 1899, Հաւելուած Ա, Յօդ. Ա-Ի, էջ 734-738:

[3] Նույն տեղում, հոդ. Ա:

[4] Նույն տեղում, հոդ. ԺԶ:

[5] Նույն տեղում, հոդ. Գ:

կայսրությանը տարեկան պետք է վճարեր «60.000 թուման», ըստ որում՝ այդ գումարի կեսը վճարվելու էր ոսկով ու արծաթով, իսկ կեսը՝ բնամթերքով՝ «հաց, միս և գինի»[1]: Բոլոր ամրոցները և զորքը պետք է լինեին «…ի ներքոյ հրամանի սպարապետին ռուսաց, մինչև ելանել նոցա ի Հայաստան աշխարհէ»[2]: Շահամիրյանը նախատեսում էր ռուսական զորքի աստիճանական վերադարձ Ռուսաստան. 10 տարի անց Հայաստանից պետք է դուրս բերվեր զորքի 1/3-ը, 15 տարի անց՝ մյուս 1/3 մասը, 20 տարի անց՝ ռուսական մնացած բոլոր զորամիավորումները: Ընդ որում՝ պետք է նվազեցվեր զորքի համար վճարվելիք տարեկան գումարը[3]:

Դաշնագրում սահմանված են Ռուսաստանի նկատմամբ հայոց՝ իբրև երախտապարտ ազգի պարտականությունները. օրինակ՝ ***եթե ռուսական կայսրը հրամայի զինվորագրել հայերին, Հայոց տունը պարտավորվում է տալ մինչև վեց հազար զինվոր*** և «…ստանալ ծախս նոցա ի կայսրութենէ»[4], ինչպես Հայաստանն էր հոգալու ռուսական զորքի ծախսը՝ ըստ Ե հոդվածի: Ուշագրավ է, որ դաշնագրում հիշատակվում է հայոց, վրաց և աղվանից ժողովուրդների վաղեմի բարեկամությունը: Ու քանի որ ռուսական կայսեր պահանջով Հայոց տունն անհրաժեշտության դեպքում տրամադրելու է 6000 հայ զինվոր, ապա հայերը «…ունիցին ևս ազատութիւն օգնական լինելոյ Աղուանից և Վրաց որքան կարող լինիցին»[5]:

Դաշնագրում սահմանված են ***Հայաստանի և Ռուսաստանի ռազմաքաղաքական փոխհարաբերությունները:*** Հայոց տունը պետք է Ռուսական կայսրությունը ճանաչի որպես հայերին գերությունից ազատող՝ մնալով բարեկամ կայսեր բարեկամներին և թշնամի՝ նրա թշնամիներին: Համապատասխանաբար՝ կայսրը նույնպես պետք է

---

[1] Նույն տեղում, հոդ. Ե:
[2] Նույն տեղում, հոդ. Դ:
[3] Տե՛ս՝ նույն տեղում, հոդ. Զ:
[4] Նույն տեղում, հոդ. Ժ:
[5] Նույն տեղում, հոդ. ԺԷ:

«…սիրեսցէ զբարեկամս և ատեսցէ զթշնամիս հայոց»[1]: Հայ և ռուս զինվորներն ու աստիճանավորները պետք է պատվեն Հայաստանում և Ռուսաստանում: Երկու ազգերը պետք է հարգեն միմյանց ազգային սովորություններն ու հավատը՝ «…ըստ սովորութեան իւրեանց յեկեղեցւոջ»[2]: Եթե Հայաստանի և Ռուսաստանի միջև ծագեն խնդիրներ, վեճեր կամ տարաձայնություն, դրանք պետք է քննարկվեն «Հռոմի», այսինքն՝ Գերմանիայի միապետի գլխավորությամբ, որպեսզի արդար վճիռ կայացվի երկու կողմի համար, և «…խռովութիւնք ու վրեժխնդրութիւնք փակեալ»[3]:

Շահամիր Շահամիրյանը հույս ուներ՝ Հայ-ռուսական դաշնագրի միջոցով վերականգնելու հայոց պետականությունը, բայց, ինչպես վկայում է պատմությունը, Ռուսաստանի օգնությամբ Հայկական պետության վերաստեղծումն այդ պատմաշրջանում անհնար էր: Առավել արժեքավոր է ***«Հայաստանի Սահմանադրության նախագիծը»,*** որը թեև գործնականում չիրագործվեց Հայաստանում, սակայն այն իր փիլիսոփայաքաղաքական և սահմանադրահիրավական գաղափարակարգով մեծ ազդեցություն ունեցավ հայ ազգային-քաղաքական և իրավական մտքի զարգացման վրա:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի անվտանգության Շահամիր Շահամիրյանի հայեցակարգն արտացոլված է նրա սահմանած զինվորական և միջազգային իրավանորմերում, որոնք բխում են Հայաստանի պետական ինքնիշխանության, սահմանների անվտանգության պահպանման նպատակներից: Դրանց իրականացումը ենթադրում էր ներազգային ուժերի համախմբում, կազմալուծված զինված ուժերի միավորում, ազգային կանոնավոր բանակի ստեղծում: Զինվորական օրենքներում սահմանված են զինվորական ծառայության կարգը,

---

[1] Նույն տեղում, հոդ. Թ:
[2] Նույն տեղում, հոդ. ԺԲ:
[3] Տե՛ս՝ Նույն տեղում, հոդ. Ի:

զորամիավորումների տեսակները, զինծառայողների իրավունքներն ու պարտականությունները, պատերազմի և խաղաղության հիմնահարցերը, գերեվարության կարգը, խաղաղ բնակչության անձնական և գույքային իրավունքների պաշտպանությունը: Շահամիրյանը դատապարտում է զինվորների օրինախախտումները (դավաճանություն, լրտեսություն, զինվորական գաղտնիքի հրապարակում, զինծառայությունից խուսափում, զենքի ու զինամթերքի արտահանում, անբարո արարքներ և այլն): Նա սահմանում է պատիժներ՝ կատարված հանցագործություններին համապատասխան: Գերագույն պատիժը մահապատիժն է՝ պետության և ազգի անվտանգությանը սպառնացող զինվորական հանցագործությունների համար: Օրենքներում հաստատվում է նաև պատիժների բարոյադաստիարակչական նշանակությունը:

Բանալի բառեր. Շահամիր Շահամիրյան, պետական անվտանգություն, զինվորական օրենքներ, հայոց բանակ, զինվորական օրինախախտումներ, պատիժներ:

ВОПРОС БЕЗОПАСНОСТИ АРМЕНИИ В ВОЕННЫХ ЗАКОНАХ ШААМИРА ШААМИРЯНА

Лилит Сарвазян
Кандидат философских наук, доцент,
старший научный сотрудник Института
философии, социологии и права НАН РА

РЕЗЮМЕ

Концепция Шаамира Шаамиряна о безопасности Армении отражена в установленном им военных и международных правовых нормах, которые исходят из целей поддержания государственного суверенитета и безопасности границ Армении. Реализация этих целей предполагала консолидацию национальных сил, объединение расформированных вооруженных сил и создание регулярной национальной армии. Военные законы определяют порядок военной службы, виды воинских частей, права и обязанности военнослужащих, вопросы войны и мира, порядок

пленения, защиту личных и имущественных прав гражданского населения. Шаамирян осуждает нарушения со стороны солдат (предательство, шпионаж, разглашение военной тайны, уклонение от военной службы, вывоз оружия и боеприпасов, аморальные действия и т.д.). Он предусматривает наказание в соответствии с совершенными преступлениями. Максимальное наказание - смертная казнь за военные преступления, угрожающие безопасности нации и государства. В законах также устанавливаются морально-воспитательное значение наказаний.

Ключевые слова*:* Шаамир Шаамирян, государственная безопасность, военные законы, Армянская армия, военные нарушения, наказания.

ARMENIA'S SECURITY ISSUE IN SHAHAMIR SHAHAMIRYAN'S MILITARY LAWS

Lilit Sarvazyan
Candidate of Philosophical Sciences, Associate Professor,
Senior Researcher of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

SUMMARY

Shahamir Shahamiryan's concept of Armenia's security is reflected in the military and international norms defined by him, which derives from the goals of maintaining Armenia's sovereignty and border security. Their implementation presupposes the consolidation of national forces, the unification of the disbanded armed forces, the creation of a regular national army. Military laws define the procedure of military service, the types of military units, the rights and responsibilities of servicemen, the main issues of war and peace, the procedure of captivity, the protection of personal and property rights of the civilian population, etc. Shahamiryan condemns law violations by servicemen (betrayal, espionage, disclosure of military secrets, evasion from military service, export of weapons and ammunition, immoral acts, etc.). He establishes punishment in accordance with the crimes

committed. The severest punishment is death penalty for war crimes that threaten the security of the population and the nation. The law establishes also the moral and educational significance of punishments.

Keywords. Shahamir Shahamiryan, national security, military laws, Armenian army, military offenses, punshiments.

ԱՐԻՍՏՈՏԵԼԻ «ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ» ԵՎ «ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԿԵՐԻ ՊԵՏՐՈՍ ԱՐԱԳՈՆԱՑՈՒ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՀԱՅ ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Անուշ Մինասյան
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Արիստոտելի տրամաբանական երկերի ժողովածուի՝ «Օրգանոնի» բաղկացուցիչ մաս կազմող «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» երկերը[1] հայերեն են թարգմանվել 5-րդ դարի վերջին - 6-րդ դարի սկզբին «հունաբան» դպրոցի ներկայացուցիչների կողմից՝ այդ երկերի Անանուն մեկնությունների[2] հետ համատեղ: Կարծում ենք, Անանուն մեկնությունների թարգմանության կարևորագույն, եթե ոչ հիմնական, պատճառ է հանդիսացել այն հանգամանքը, որ գրված լինելով պարաֆրազի ձևով, դրանք ամբողջությամբ՝ «Բան» վերտառությամբ, հատված առ հատված պարունակել են Արիստոտելի «Կատեգորիաներ» և «Մեկնության մասին» աշխատությունների ամբողջական տեքստերը:

---

[1] Գրաբար թարգմանությամբ՝ «Ստորոգութիւնք» և «Յաղագս մեկնութեան» կամ «Պերի արմէնիաս»՝ հունարենի փոքր-ինչ աղավաղված հայերեն ընթերցմամբ («Περὶ ἑρμηνείας»- «Պերի հերմենեաս»):

[2] Այս մեկնությունները Անանուն են կոչվում, քանի որ մինչ օրս տարբեր կարծիքներ են շրջանառվում դրանց հեղինակի ինքնության վերաբերյալ: Անանուն մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտէլի, համահավաք բնագիրը Ս.Պ. Լալաֆարյանի և Վ.Կ. Չալոյանի, առաջաբանը և խմբագրությունը Վ.Կ. Չալոյանի, թարգմանությունը գրաբարից ռուսերեն Ս.Ս. Արևշատյանի, Ե., 1961: Յաղագս մեկնութեան Պերիարմենիաս, Մատենագիրք Հայոց, ԺԷ. Հատոր, ԺԱ դար, Յաւելուած, Եր., 2016, էջ 796-883: